ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ - 424- 2024
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «04» 11 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նպաստ տրամադրող), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի (ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա), մի կողից և Գրիգոր Առաքելյանը (այսուհետ՝ Նպաստ ստացող) (անձնագիր՝ AX 0313937, տրված՝ 18.06.2024թ.-ին, 023-ի կողմից) մյուս կողմից, հիմք ընդունելով կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 4-ի թիվ 171-Ա/2 հրամանով հաստատված դրույթները, «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշմամբ հաստատված «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման կատարումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրով նախատեսվում է նպաստ տրամադրել 2024 թվականի հոկտեմբերի 1-5-ը Կատովիցե քաղաքում (Լեհաստան) կայացած Հայկական մշակույթի երրորդ փառատոնին մասնակցելու նպատակով 207.2 հազար (երկու հարյուր յոթ հազար երկու հարյուր) դրամի (այսուհետ՝ Նպաստի գումար) չափով, որից 157.8 հազար (մեկ հարյուր հիսունյոթ հազար ութ հարյուր) դրամը հատկացվում է 2024 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեբերի 7-ը Երևան-Վարշավա-Երևան ավիատոմսի ձեռքբերման համար, իսկ 49.4 հազար (քառասունինը հազար չորս հարյուր) դրամը՝ գիշերակացի համար (117€ x 422.01 դրամ (տարադրամի փոխարժեք) = 49.4 հազ. դրամ):

2. ՆՊԱՍՏԻ ԳՈՒՄԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Նպաստի գումարը տրամադրվում է Նպաստ ստացողին՝ Պայմանագրով նշված բանկային հաշվին՝ դրամական միջոցների փոխանցման միջոցով: Նպաստի գումարի փոխանցումը կատարվում է պայմանագրի կնքման պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.Նպաստ տրամադրողն իրավունք ունի՝

3.1.1.Նպաստ ստացողից պահանջել հատուցելու Նպաստի գումարն ընդունելուց հետո հրաժարվելու հետևանքով իրեն պատճառված իրական վնասը:

3.1.2.Նպաստ ստացողի կողմից ներկայացված հաշվետվության հետ կցվող անհրաժեշտ փաստաթղթերի իսկությունը չհամապատասխանելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը:

3.2.Նպաստ տրամադրողն պարտավոր է՝

3.2.1.Պայմանագրի 2.1 կետով սահմանված կարգով Նպաստ ստացողին փոխանցել Պայմանագրի 1.1 կետով սահմանված Նպաստի գումարը:

3.3.Նպաստ ստացողն իրավունք ունի՝

3.3.1. Մինչև Նպաստի գումարն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այս դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված:

3.4. Նպաստ ստացողն պարտավոր է՝

3.4.1. Ընդունել Նպաստի գումարը:

3.4.2.Հատուցելու Նպաստի գումարը փոխանցելուց հետո, դրա ընդունելուց հրաժարվելու հետևանքով Նպաստ տրամադրողին պատճառված իրական վնասը:

4.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Նպաստ ստացողն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված փաստաթղթերի իսկության համար:

4.2. Պայամանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

4.3.Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայասատանի Հանրապետության օրենսդրությունը:

4.4. Պայմանագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

4.5. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐՈՂ	ՆՊԱՍՏ ՍՏԱՑՈՂ
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Գրիգոր Աշոտի Առաքելյան
Ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք	Ք. Երևան, Փարփեցի 26 շ., բն. 28
ՀՀ ՖՆ գործառական վարչություն	Անձնագիր՝ ՝ AX 0313937, տրված՝ 18.06.2024թ.-ին, 023-ի կողմից
Հ/Հ 900011032878,	«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 220490841966000
Գլխավոր քարտուղար՝	Էլ. փոստ՝ arakelian.grigor@gmail.com
	Հեռ.՝ 044960002
Հ. Հակոբյան	Գ.Առաքելյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.